ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. նոյեմբերի 7-ից 9-ը ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանի՝ Իրանի Իսլամական Հանրապետություն (ԻԻՀ) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

   Տիգրան Խաչատրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ ֆինանսների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   ք. Թեհրան, ԻԻՀ, 2022թ. նոյեմբերի 7-ից 9-ը

4. **Հրավիրող կողմը՝**

   ԻԻՀ տնտեսական հարցերի և ֆինանսների նախարարություն

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն ԻԻՀ նախագահի տեղակալի, ԻԻՀ տնտեսական հարցերի և ֆինանսների նախարարի, ԻԻՀ արդյունաբերության, հանքերի և առևտրի նախարարի հետ հանդիպումներին և աշխատանքային քննարկումներին:

6. **Քննարկված թեմաները՝**

ԻԻՀ կատարած այցի շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել ԻԻՀ նախագահի տեղակալի, ԻԻՀ տնտեսական հարցերի և ֆինանսների նախարարի, ԻԻՀ արդյունաբերության, հանքերի և առևտրի նախարարի և բարձրաստիճան այլ պաշտոնյաների հետ: Հանդիպումների շրջանակներում քննարկվել են Իրանի և Հայաստանի միջև համագործակցության շարունակական զարգացման ու ամրապնդման հեռանկարները, հարևան երկրների միջև երկուստեք կարևորության տնտեսական առաջնահերթությունները, մասնավորապես՝ առևտրաշրջանառության ծավալների մեծացումը, ինչպես նաև ֆինանսական, առևտրային և մաքսային հարաբերությունների պարզեցումն ու զարգացումը և այլն:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

ԻԻՀ կատարած այցի ժամանակ անդրադարձ է կատարվել Իրանի և Հայաստանի միջև երկարամյա տնտեսական ու քաղաքական համագործակցային հարաբերություններին՝ ևս մեկ անգամ ընդգծելով արդյունավետ և կառուցողական համագործակցության շարունակականության կարևորությունը: Անդրադարձ է կատարվել ոլորտային համագործակցության հարցերի շուրջ համագործակցության խորացման հեռանկարներին:

Հանդիպումների ընթացքում կողմերն անդրադարձել են Հայաստանի և Իրանի միջև առևտրի մակարդակը տարեկան 3 միլիարդ ԱՄՆ դոլարի, իսկ ապրանքների փոխանակման ծավալը՝ 5 միլիոն տոննայի հասցնելու հնարավորություններին:

Անդրադառնալով Հայաստանում իրականացվող ներդրումային ծրագրերին՝ իրանական կողմը տեղեկացրել է, որ հետաքրքրված է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» հարավային հատվածի կառուցման աշխատանքներին մասնակցությամբ:

ՀՀ ֆինանսների նախարարը առաջարկել է Իրանական ընկերությունների համար կազմակերպել աշխատանքային քննարկումներ ՀՀ պետական գնումների համակարգի առանձնահատկությունները ներկայացնելու նպատակով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ԻԻՀ այցի շրջանակներում կայացած հանդիպումների արդյունքում պայմանավորվածություն է ձեռքբերվել շարունակել երկուստեք շփումները և հանդիպումները, ինչպես նաև ակտիվացնել աշխատանքները երկու երկրների ֆինանսների նախարարությունների միջև գիտելիքի և փորձի փոխանակման ուղղությամբ:

Recoverable Signature

X

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝ Signed by: KHACHATRYAN TIGRAN 2112700065

11.11.2022թ.